

ՏԱՐԿԱՅ ԸՆԹԱՑԻՆ ՈՒ ՄՈՐԵԽԸ ԳԱՆՁԱԿԻ
ԳԱՒԱՌՈՒՄ

Տարվայ ընթացքում ընթացքն առ այժմ բա-
լական լաւ է մեր գաւառում. ապրիլի կէտից
դէտը, երբ տեղի ունեցան անօրինակ եւ մի
քանի տեղերում աղէտաբեր ցրտեր, եղանակը
կանոնաւորվել է. անձրեւն ու արեւը կարծես
նախօրօք կազմած ծրագրով յաջորդելիս լինեն
իրար Սյո բարեխառնութիւնը նշանաւոր չա-
փերով նպաստում է բուսականութեան զար-
գացման. ցանքերը, խոտաբերներն ու արօտա-
տեղիները հրաշալի տպաւորութիւն են թող-
նում թէ գաղտնավարում եւ թէ գաւառի լեռ-
նային մասերում, թէեւ վերջին տեղերում
անձրեւները չափից դուրս առատ են, որ այն-
քան էլ ցանկալի չէ. եթէ մի ամիս էլ եղանա-
կի բարեխառն ընթացքը շարունակվի այսպէս,
հունիսը մեր գաւառում անկասկած լաւ կը լինի,
իսկ տեղ-տեղ նոյն իսկ գերազանց, անօրինակ,
տասնեակ տարիների ընթացքում մի անգամ
կրկնվող հրաշք:

Դեռ մի երկու ամիս առաջ գիւղացին արին
արտատուր էր թափում ապուռի կատարեալ
բացակայութեան պատճառով. Այժմ այդ սեւ
օրերը նրա բազմաթիւ տխուր յիշողութիւննե-
րի շարքն են անցել. նրա խոտաբերներն ու ար-
օտավայրերը, խիտ կանաչով ծածկված, ալե-
կոծվում են ծովի նման. կուշտ է կիթի կովը,
կուշտ է նաեւ գիւղացին, կուշտ ու կաղցուր-
ված է եղը, կաղցուրված ու արիւնքած է նաեւ
նրա անբաժան ընկեր գիւղացին, որը վերջա-
պէս ընկել է գութանը ու Աստուծուն փառք
տալով դուրս եկել դաշտ Սակայն ամեն րօպէ
նա գողացվում է ճեղք մատաղ, Աստուծո՛ւ ասե-
լով, խորին երկիւղածութեամբ իր հայեացքը
դարձնում է վեր, նայում ամպաւած երկնքին,
խաւար, անբաղաւաղ ժայռեր. այդ միակ
ապաւենին, վախճանով՝ մի գուցէ այնտեղից
կարկուտ թափվի ու ոչնչացնէ նրա արին
քրտինքով ողորդած ու բուրցողած արտը, որի
հատուկանքն էր նա արտադրի սպասում է:

Տարվայ այս ժամանակ սովորական բան է
տեսնել գիւղացուն ամբողջ ընտանիքով, շան
բոլորի ու զլխաբաց ամենափոքր անդամներով
հանգերձ, արտում «ալա քաշելիս», այսինքն
մաքերիւս արտը որոններից ու այլ անպէտք,
մնասակար բոյսերից, ցեցերից, Գեղվուկները,
գիւղացու կինը, աղջիկը, իրանց արտը աւելի
մեծ խնամքով են սանրում, գուրգուրում, քան
իրանց մաքերը. Արտ գնալը, «ալա քաշելը» ու
թիւն գնելը համար արտում շուշան քաղելը
մեր գեղվուկների համար թէ պարտական-
ութիւն է եւ թէ գութանութիւն, այնպէս ա-
նարատ, անմեղ ու մաքուր, ինչպէս չընկալա-
տող ծաղկափթիթ ընտելութիւնը Դոժար չէ ե-
րեւակայել այն ողբերգական վիճակը, որի մէջ
անսպասելի կերպով ընկնում է գիւղացին, երբ
նրա դաժան, անչափ աշխատանքով բուսցրած
ու ոչ պակաս անչափ խնամքով պահպանվող
արտը զոհ է գնում որ եւ է աղէտի՝ կարկտի,
երաշտի, մկան կամ մորեկի, գիւղացու ողջ
գերդաստանը, թէ մեծ, թէ փոքր, թէ հի-
նաւուրց զառամեալ պապն ու տատը եւ թէ
նոր աչք բացած մանկուն, նստում է մարած
օջաղի զրաղին ու սգում, ողբում արտի ա-
նակնկալ կորստանքը այնպիսի աղիողորմ կեր-
պով, ինչպէս տան ամենաթանկագին անգամի
վաղածամ մահը. Հէտ է, ինչ է, գրկվել տարե-
կան «հալա» ապրումներից, իսպառ կորցնել ար-
դար վաստակը ու կրկին գնալ վիզ ծոկ վաշ-
խատուի առաջը. լիզել նրա ոտները ու լուռ
տանել նրա անամօթ ատախաճութիւնները, ան-
խիղճ պատասխաններն ու կողմից հայեացք-
ները:

Մեր գաւառի մի քանի գիւղեր, ինչպէս են՝
Վերին եւ Ներքին Գարնաւ, Կիրանց, Խաչա-
կապ, Փիւր ու Բանանց, այժմս դէմ առ դէմ
կանգնած են մի անակնկալ աղէտի. մորեկի
առաջ, որը ահագին քանակութեամբ երեւա-
ցել է Գանձակ գետի ակունքներից դէպի ա-
րեւմուտք գտնվող «Համա-Կա» անուն կրող
ընդարձակ լեռնադաշտում. Գաւառի լեռնային
այդ մասում մորեկը մի շատ հագուստաւոր
հիւր է, եւ ահա այս տարի այդ անկող հիւրը
կարծես դիտմամբ եկել է տարվայ առատու-
թիւնը ոտի տակ տալու, փչացնելու եւ ի սրտէ
ժպտալու, ուրախանալու, խնդալու իրաւուն-
քից մեր խեղճ գիւղացուն իսպառ զրկելու.
Իսկական խնդութիւն տարը տարին մի անգամ
հազիւ է աջողվում զգալ գիւղացուն. լիութիւնն
ու առատութիւնը շատ ու շատ հագուստաւոր
բաներ են. Մորեկը երեւացել է ապրիլի վեր-
ջերին ու սկսել իր կորստաբեր արշաւանքը,
որի դէմ գիւղացիները, գաւառական վարչու-

թեան կարգադրութեամբ ու մասամբ էլ իրանց
զրդմամբ, որ միւլթաբական է շատ, իսկոյն
եւ եթ եռանդուն կուր են սկսել. Արդէն եր-
րորդ շաբաթն է, ինչ այդ կուրը շարունակ-
վում է. յոյս կայ, որ յաղթութիւնը գիւղացի-
ներին կողմը կը լինի, ու այդպիսով մորեկին
չի աջողվի նսեմացնել այս բարեբեր տարվայ
վարկը, լափելով նրա առատ բերքը. Յիշեալ
գիւղերից Իւրաքանչիւր օր առնուազը 1000—
1200 մարդ է գնում մորեկ կոտորելու. իրանց
տանուտէրների զեկավարութեամբ. Տարվայ
այս ժամանակ այդքան մարդկանց իրանց սովո-
րական գործից, աշխատանքից ընկնելը շատ
զգալի է նրանց խեղճ ընտանիքների համար.
տաշտում մի կտոր անգամ հաց չը կայ, պար-
կում կամ քիտցում մի բուռն անգամ ալիւր,
իսկ աշխատանքի գնալ, մշակութիւն անել չէ
կարելի. քանի որ «Աստուծու պատուհասը»,
մորեկը եկել է երեխանց տարեկան հացը նը-
րանց բերաններից խլելու:

Այժմ թէ տանն են սոված, թէ գաղտում.
թէ այնտեղ եւ թէ այստեղ գիւղացիներն ըստ
իրանց վաղեմի սովորութեան եօլա են գնում
մի կերպ, այլ ոչ թէ մարդավայել ապրում. Մի
հաց ունեցողը դաշտում նրանով համ ինքն է
ապրում, համ էլ մի երկու բոլորովին ան-
ճար սովածներին կերակրում. Մեծ բարեբա-
րութիւն կը լինի, եթէ այդ սովատանջ արիա-
ւան բանտերներն ի վարձատրութիւն գնեն հաց
տան. նրանք միմիայն հաց են ուզում, հաց,
այդ է նրանց ցանկացած վարձատրութիւնը.
Եթէ նրանք քիչ-շատ բաւարար կերակրեն,
գնեն առատութեամբ ցամաք հաց տան, նրանք
անտրտուն կը շարունակեն մորեկի ոչնչա-
ցումն. իսկ այդ գործը գուցէ դեռ շաբաթնե-
րով շարունակվի. Մենք լսել ենք, որ գաւա-
ռական վարչութիւնը մորեկ կոտորելու համար
նշանակած միջոցներից մտադիր է մորեկ կո-
տորող զաղացիներին կերակրել, ու արգելի ար-
վել են քաղաք այդ մտադրութիւնը իրագործե-
լու համար. Յուսով ենք, որ վարչութիւնը,
որը գովելի եռանդով հոգ է տանում մորեկ
կոտորելու գործի մասին, կը հոգայ նաեւ խեղճ
գիւղացի մշակների անմիջապէս ապրուստը,
որոնց ցամաք հացն անգամ լիովին բաւարա-
րութիւն կը տայ, ինչ տրվի նրանց այդ:

P. S. Երեկ եկան ինձ մօտ երեք գիւղական
տանուտէրներ ու թախանձանքով խնդրեցին, որ
այս բոլորը շուտով գրեմ նրանց անունից «Մը-
շակ» կազէթին:

Ստ. Տէր-Աւետիքեանց

ՆԱՄԱԿ ԱՅՈՒԹԱՆՔԻՅ

Մայիսի 4-ին

Տեղական երիտասարդութիւնը ուզում է որ
եւ է համեստ եւ մտաչելի ձեւով պատուել
հանգուցեալ Երեմիանի յիշատակը, սակայն ոչ
հոգեհանգստի, որ վերջերս մի տեսակ սովո-
րութիւն է դառնել մեզանքում. Այս անգամ մը-
տադրութիւն կայ, հոգեհանգստի փոխարէն,
Երեմիանի յիշատակին մի քանի օրինակ լրագիր
կամ ամսագիր ուղարկել գիւղ, ինչպէս արել
էին Աստաթախով յարգողները. Բայց, երեւի,
տեղական ժողովրդին Երեմիանի անձնաւորու-
թեան հետ մի փոքր ծանօթացելու, ինչպէս
եւ քարոզ խօսելու գեղեցիկ առիթ ունենալու
համար՝ Ընձակ վարդապետը անցեալ ապրիլի
21-ին իր հաշով հոգեհանգիստ կատարել տուեց
Երեմիանի յիշատակին, որի առիթով եւ քարոզ
խօսեց, ինչպէս սպասելի էր. Իր այդ քարոզով,
որը նուիրված էր գրականութեան եւ մամուլի
բարձր նշանակութեանը ու գրականագէտների
եւ հրապարակախօսների կոչմանը, վարդապետը
շատ գեղեցիկ ճշմարտութիւններ ասաց, սա-
կայն համարեալ ոչինչ չասաց հանգուցեալի մա-
սին, այնպէս որ ժողովուրդը ցրվեց՝ փոքրիկ
տեղեկութիւն անգամ չը ստանալով Երեմիանի
մասին:

Այս մասնաւոր հոգեհանգիստը, անկասկած,
չի խաղաքարի երիտասարդներին գլուխ բերելու
իրանց մտադրութիւնը, այն է՝ կարողաւ ա-
ռողջ նիւթ ուղարկելու գիւղ՝ ի յիշատակ հան-
գուցեալ Երեմիանի:

Նոյն ձեւով ուզում էինք յարգել եւ Կարա-
Մուրզայի յիշատակը, մանաւանդ որ մեր եկե-
ղեցում նրա համար հոգեհանգիստ կատարե-
լու մասին խօսք էլ չէր կարող լինել. Բայց
մի երկու գիւղական հայ-կաթօլիկ ուսուցիչ
նախաձեռնութիւն են յանձն առնում մերձակայ
Բալթա թրքախօս հայ-կաթօլիկ գիւղի եկեղե-
ցում, հայ-կաթօլիկ քահանայի միջոցով, պա-
տարագ եւ հոգեհանգիստ կատարել տալու հան-
գուցեալ երաժշտագէտի յիշատակին, մտադ-

րութիւն ունենալով հրաւիրելու քաղաքի հայ-
լուսաւորական եկեղեցու քառանկյն խումբը,
որ երգէ պատարագի եւ հոգեհանգստի ժամա-
նակ, ինչպէս եւ գաւառի գործակալ վարդա-
պետին եւ քաղաքի ինտելիգենցիային, որ
իրանց ներկայութեամբ պատուեն հանգու-
ցեալի յիշատակը. Խոշորամա գիւղի ծխա-
տէր քահանայն, կամ, ինչպէս ասում են, վար-
դապետը, որ ժամանակաւոր կերպով հովիււմ
է եւ Բալթա գիւղը, համաձայնվում է այդ
ծրագրի հետ, նոյն իսկ մտադրվում է քարոզ
խօսելու «Քարոզ էլ կը խօսեմ. ինչի քանքարա-
թագոց լինեմ, քանի» որ Աստուած խօսելու
ձիրք է տուել, աւելացնում է պատուելին:

Նախաձեռնող պարոնները իմաց են տալիս
քաղաք, եւ ահա անցեալ կիրակի, ապրիլի
28-ին, գործակալ վարդապետը, քաղաքի հայոց
եկեղեցու խումբը, ուսուցիչներ եւ հանգու-
ցեալ Կարա-Մուրզայի գործունէութիւնը գնա-
հատող բազմաթիւ հասարակութիւն, երկու
սեռից, շտապով ձանապարհվում են Բալթա,
որ որոշված ժամանակին ներկայ գտնվեն պա-
տարագին եւ հոգեհանգստին:

Բայց... անսպասելի հիասթափութիւնը Նշա-
նակված ժամին գալիս են եւ տեսնում, որ ե-
կեղեցին փակ, ոչ ոք չը կայ: Դէս քահանայ,
դէս քահանայ... Չը կայ ու չը կայ: Գիւղացիք
ասում են, թէ վաղ առաւօտեան, ժամը 7-ին,
վարդապետը՝ տեսնելով որ դուր չէկա՞ր՝ պա-
տարագը վերջացրեց ու գնաց Խոշորամա:

Երկու անգամ ձիււթ էր ուղարկվում, որ
վարդապետը դայ, հասկացնում են, որ իրան
կարգավիշ են եղբայրակից մի ուրիշ հայ վար-
դապետ, երգեցիկ խումբը եւ երկսեռ բազմու-
թիւնը սպասում են, բայց նա անդադուելի է
մնում: «Չեմ ուզում կաթիւս հետ թան
խառնել», գոհակարար պատասխանում է եղ-
բայրութեան եւ սիրոյ տգէտ սեռաւորը.
(Սակայն գիրին եւ արողը՝ ինչի հետ ուղեւ,
խառնում է մոլեռանդ երազատուելին): Այդպէս,
չը կարողացանք հայ գործիչի յիշատակին յար-
գանքներ տալ հայ եկեղեցում. Բայց կղերի
խոշորատները չեն կարող գիտակցող ժողովրդին
իսպառ անտարբեր դարձնել: Վճռվում է դնալ
գիւղի հանգստութեան եւ բացօթեայ աղօթել եւ
յարգանքներ տալ Կարա-Մուրզայի յիշատակին...

Ընձակ վարդապետը՝ առանց փիլօսի ու չուր-
ջառի՝ մի քանի աղօթքներ կարդաց, իսկ խում-
բը, պ. Տօնակեանի զեկավարութեամբ, «Հայր
մեր» եւ մի քանի ուրիշ կողմեր երգեց պա-
տարագից, ապա դամբանական տաղեր երգվե-
ցին... Այդ անչուր աղօթքից յետոյ՝ Ընձակ
վարդապետը մի համառօտ ատենաբանութեան
մէջ ցաւ ցաւ յայտնեց, որ հայ-կաթօլիկ քահա-
նան բացակայում է եւ ապա խօսեց ժողովր-
դական երգի եւ երգիչների նշանակութեան
մասին, որից յետոյ դարձանք դէպի քաղաք:

Ճանապարհին, աղբատիկ գիւղի փողոցներով,
ապա Փարվանայի ափին բնկած կանաչադեղ ու
միզաւտ դաշտով անցնելիս, մտադրող խղիկնե-
րից կաղմած խումբը՝ Կարա-Մուրզայի մօտ
խմբագրութիւն սովորած ուսուցիչ Տօնակա-
նեանի զեկավարութեամբ՝ երգում էր Կարա-
Մուրզայի ներշնչանկած ժողովրդական եւ աղ-
բային եղանակներ: Գարնան սրանչիլի օրը, նոր
արթնացած բուսութիւնը, զգացված երգը, մա-
տաղ ձայները գեղեցիկ ներշնչանկութիւն էին
կազմում եւ երախտագիտական գեղեցիկ զգաց-
մունքով միացած արտերը ուրախացնում: Այդ
հարմոնիայի աղբեցութեան տակ մենք նոյն իսկ
մոտացանք քիչ առաջ հայ-կաթօլիկ քահանայի
անմիտ, կոպիտ եւ քաղաքավարութեան տար-
րական կանոններին հակառակ վարմունքից ա-
նոյնացած տխուր մտածողութիւնները:

Բայց, ի հարկէ, չը պէտք է բաւականանալ
դրանով: Չը պէտք է մոռանալ նախկին մտա-
դրութիւնը. եւ որովհետեւ հանգուցեալի աշ-
խատութիւնները հրատարակելու եւ գաւառիկե-
րին ապագովելու հարցը հերթական է դառել,
ցանկալի է, որ Ախալքալաքն էլ իր ժողովրդա-
կան կոպէկը տալ համակրելի նպատակին հա-
մարձ Կարա-Մուրզայի յիշատակը արժանի է
ժողովրդական եւ հասարակական յարգանքի,
որովհետեւ նա իր համբարով լոյսի հրաշալի
ճառաբաններ էր մտցնում իր մերձաւորներին,
իր ժողովրդի խաւար, ուրախութիւնից զուրկ
կեանքի մէջ...

Յուսեմ յիշատակ ազնիւ աշխատաւորին...

Սալլիւման

ՆԱՄԱԿ ԽՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Մօսկվա, մայիսի 6-ին

Կարդացի «Մշակ» № 63-րդում պ. բժիշկ
Ս. Շահապարեանի նամակը՝ նոյն լրագրի №

42-ում լոյս տեսած իմ «Դէտից-Դէտից» յօդ-
ւածի ամօթով. Իր այդ նամակում պ. բժիշկ
Շահ-Նապարեանի մի քանի առաջարկութիւններ
է անում ինձ եւ պահանջում որ ոչ ալ չպա-
տասխանենք ընդգծելով որոշակի խօսքը:

Առաջ քան, պ. բժիշկ, ձեր նամակին ըստ
էութեան պատասխան տալու եւ ձեզ հետ
լրագրական աշխիւ բանակում մէջ
մտնելու, որից դուք, յոյս ունեմ, խոյս չէք
տալ, եւ էլ իմ կողմից առաջարկում եմ ձեզ
եւ նոյն իսկ խնդրում հրապարակով յայտնել.
արդեօք 1900 թիւն, երբ տեղական հայ գա-
ղութիւն արդէն ընտրել ու քահանայ էր հռու-
րում պ. Աւետիս Ասարեանին, դուք ուղար-
կել էք որ եւ է թուղթ Մօսկվայի հայոց եկե-
ղեցիների հոգաբարձուին այդ խնդրի առիթով
եւ ինչ է ձեր այդ թղթի բովանդակութիւնը:

Եթէ դուք, պ. բժիշկ, քաղաքացիական ա-

րիութիւն ունենալով հանգերձ՝ այնուամենայ-
նիւ չէք կամենայ կամ հնարաւոր չէք համարի
հրապարակ հանելու ձեր այդ գրութիւնը, որի
մէջ պէտք է փնտրել իմ գործածած «արար-
մունք» խօսքի լուսաբանութիւնը, այն ժամա-
նակ եւս արդով կառաւարկեմ ձեզ մի այլ պա-
տուաբեր միջոց—այն է՝ միջոցաւորական դա-
տարան:

Սլաքեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Շուշի մայիսի 10-ին

«Մշակ» № 73-ի մէջ 3 ասող ստորագրու-
թեամբ մի կըրտու մանրէն նամակ է տըր-
ված իմ «Օթելլոյ» ներկայացման առիթով:

Յարգելի՛ պ. յօդուածագիրը ասում է. «Դան-
լիւն բաւականին դատարկ էր...»: Եւ անհեր-
քելի կերպով կարող եմ հաստատել, որ թատ-
րօնը նոյն երկրորդի գրեթէ լիւն էր:

Պ. անստորագիր յօդուածագիրը ասում է.
«նա իր Օթելլոյի բոլոր տեսարաններում աշ-
խատում էր ամեն կերպ ընդօրինակել իր ու-
սուցչին, հռչակաւոր Միւնէ-Սիւլին...»: Բայց
դժբաղդաբար ընդօրինակութիւնը բաւակա-
նանալով էր...»: Մեծ արտաստ, Միւնէ-Սիւլին,
երբեք իմ ուսուցիչ չէ եղել, մի րօպէ նրա-
նից դաս չեմ վերցրել: Պ. անստորագիր յօ-
դուածագիրը յանդգնում է տեղական սիրող-
ներին «նազօններ» անուանել. Խնդրեմ հաճեցէ
բոլոր սիրողների «նազօններ լինելը», որոնց հետ
ես խաղայի «Օթելլո» եւ «Համլէտ»:

Պ. յօ-
դուածագիրը ասում է. «մի քանի երիտասար-
դաւանդներ ծափահարում էին «կլայկեօրի» նը-
ման» (վարձկան ծափահարողներ), իսկ մի քա-
նիսն էլ նոյն իսկ անպարկեշտութիւն ունեցան
ձեռքերի վրա բարձրացնելու պ. Գալֆայեա-
նին...»:

Եւ, միտ հալածվողս, կարող եմ հաստատել
որ գրեթէ ամբողջ թատրոնը համակարգից
զգացմամբ ու սրտաբուռն ծափահարութեամբ
4-5 անգամ ինձ բնմը կանչեց:

Յարգելի հանդիսականներ, պ. գաւառագի-
տը, թատրոնի տէր պ. Խանաթաբեկեանը եւ
բնակարան զարդի անուշը ու ուսուցիչները,
սիրողները կարող են վկայել իմ ասածների
զուտ ճշմարտութիւնը:

Կար. Գալֆայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Երեւանի մայիսի 14-ին, Նոյա Մեծու-
թիւններ թագաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդ-
րովիչի եւ Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա
Ֆեօօրօվնայի սրբազան թագաւորութեան տօնի
առիթով, ուսաց Ալեքսանդրօ-Նեվսկի զինուո-
րական տաճարում, հայերի, կաթօլիկների եւ
բողոքականների եկեղեցիներում, ինչպէս եւ
մասնաւորականների մզկիթներում ու հրէաների
աղօթատանը տեղի ունեցան գոհացողական
մաղիւններ: Ալեքսանդրօ-Նեվսկի զինուորա-
կան տաճարում տեղի ունեցած պատարագին եւ
մաղիւններին ներկայ էին կողմասեան կառավար-
չապետ Իլյան Գոլիցին, նրա օգնական գնե-
րալ Ֆրէդէ եւ այլ աստիճանաւորներ: Քաղաքի
առաւօտանից զարդարված էր դրօշակներով եւ
երեկոյեան—լուսավառված:

Բազմաթիւ վարդապետ թաւաքալեանի մասկան
առիթով Գանձակից ստացանք հետեւեալ հե-
ռագրները.—1) «Գանձակի հայ հասարակու-
թիւնը, խորին կերպով վշտացած իր ջերմ սի-
րած արժանաւոր հովիւ Բազմաթիւ վարդապետ
Թաւաքալեանի մասկան անակնկալ լուրով այսօր
հաւաքվելով եկեղեցի հոգեհանգիստ կատարեց
ջերմագին աղօթքներ վերադարձելով նրա բազմա-
տանջ հոգու հանգստութեան համար: Մէլքե-
Բէգարեանց: 2) Ողբում ենք ազնիւ աշխա-
տաւոր եւ լաւ հոգեւորական Թաւաքալեանի
վաղածամ մահը: Գանձակի նահանգի հայու-
սուցիչների մի խումբ:

Մեզ հարորդում են, որ մի խումբ անձինք
Ղ. Աղայեանի յարգողներից, առա

Электротехнический Груз. Издат. Т—ва. Б. Вавилонская ул.